ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-17/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի /շինանյութերի ձեռքբերում/**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 25.08.2017թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**
<u>Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/</u> Հ. Սարոյանը

**Անդամներ՝**
<u>Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/</u> Դ. Հարությունյանը
Գ. Աղումյանը
<u>Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/</u> Ա. Հովհաննիսյանը
Լ. Կաքասակյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**
<u>Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ/</u> Մ. Նիկոյանը

<u>1. Ընդունել ի գիտություն.</u>

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 22.08.2017թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «Լուվա» «Էկոմիքս» ՍՊ ընկերությունների և «Հայկ Գալստյան» ԱՁ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 16.08.2017թ. թիվ 2 որոշմամբ՝ համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ «Լուվա» ՍՊԸ՝ 10,11,18 չափաբաժիններով, «Էկոմիքս» ՍՊԸ՝ 12,13,14,15,16 չափաբաժիններով, «Հայկ Գալստյան» ԱՁ՝ 17-րդ չափաբաժնով, 23. 08. 2017թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

<u>2. Հանձնաժողովն արձանագրեց.</u>

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «Լուվա» «Էկոմիքս» ՍՊ ընկերությունների և «Հայկ Գալստյան» ԱՁ վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ եզրակացություն չի ստացվել:

2.2 «Լուվա», «Էկոմիքս» ՍՊ ընկերությունների և «Հայկ Գալստյան» ԱՁ սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացվել են էլեկտրոնային փոստով /կցվում են/: Ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-17/12 ծածկագրով հրավերի պահանջներին:

2.3 «Լուվա» ՍՊ ընկերության հայտում /Հավելված 6.1/ 10 և 11 չափաբաժիններով արձանագրվել են անհամապատասխանություններ՝ նշվել է մետաղահատ սկավառակների հաստությունը սմ-ով, փոխարենը պետք է նշվեր մմ-ով:

<u>3. Հանձնաժողովը որոշեց.</u>

3.1 Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և պահանջել «Լուվա» ՍՊ ընկերությունից շտկել սույն արձանագրության 2.3 կետում նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0